

# Լրատու

Թիւ 10 (Բացառիկ)  
Դեկտեմբեր 2008

Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Գրասենեակի



## Սիրելի հայրենակիցներ,

2008 թուականի վերջին եռամսեան, մեր գործունեութեան ծիրէն ներս, կրնամ համարել չափազանց աշխոյժ եռամսեայ մը, Երեսփոխանական Գրասենեակի բեղուն աշխատանքներով, կազմակերպուած յաջող ձեռնարկներով եւ Կիպրոսէն դուրս պետական ու պաշտօնական մակարդակի այցելութիւններով:

Ինչպէս արդէն յայտնած էի «Լրատու»ի նախորդ թիւով, Զոկտեմբեր 9-10 ներկայ գտնուեցայ Սթրազպուրկի մէջ կայացած Եւրոպական Խորհուրդի Գլխաւոր Կառնոյցի Ազգային Փոքրամասնութիւններու Պահպանութեան Խորհրդաժողովին (Framework Convention for the Protection of National Minorities), որպէս միակ ներկայացուցիչը Կիպրոսի Կրօնական Փոքրամասնութիւններէն: Շատ արդիւնաւետ եւ բովանդակալից խորհրդաժողով մըն էր, որ կը զուգահիւսէր վերոյիշեալ կառնոյցի Ազգա-

յին Փոքրամասնություններու Պահպանութեան Յանձնաժողովի հիմնադրութեան տասնամեակին: Մանրամասնությունները կարդացէք «Լրատու»ի թիւ 6 էջին մէջ:

Նոյեմբեր 2ին, Ազգային Առաջնորդարանի «Իւթիւնճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Տարեցներու հաւաքը, որուն ընթացքին Կիպրոսի Թոշակառուներու Միութեան ներկայացուցիչները անհրաժեշտ տեղեկութիւններով լուսաբանեցին գաղութիս երրորդ տարիքի անդամները, բացատրութիւններ տալով ներկայի իրաւունքներուն եւ նպաստներուն, ինչպէս նաեւ օրէնքները բարելաւելու նպատակով տարուելիք աշխատանքներուն մասին: Այս ձեռնարկին յաւելեալ տեղեկութիւնները կարդալ յաջորդող էջերուն մէջ:

Նոյեմբեր 3-5 պաշտօնական հրաւերով Կիպրոս այցելեցին Հայաստանի Հանրապետութեան Արդարադատութեան Նախարար Պրն. Գեորգ Դանիէլեան եւ Փոխ-Նախարար Պրն. Էմիլ Պապայեան եւ այս առիթով, ներկայ գտնուեցայ կարգ մը տեսակցութիւններու՝ Կիպրոսի Կառավարութեան հրաւերով:

Նոյեմբեր 5ին տեղի ունեցաւ Լիմասոլի Նարեկ Վարժարանի նորակառոյց շէնքին բացումը, ձեռամբ Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Նորին Վսեմութիւն Տիմիթրիս Խրիստոֆիասի, որ գաղութիս մէջ գոհունակութեան ալիք մը ստեղծեց: Այս ժեստը անգամ մը եւս եկաւ ապացուցելու Կիպրոսի Կառավարութեան անսակարկելի բարեխնամութեան պատրաստակամութիւնը Կիպրոսի Հայ Համայնքին նկատմամբ:

Նոյեմբեր 11-14, ընկերակցեցայ Կիպրոսի Խորհրդարանի Հայազգի Նախագահ Պրն. Մարիոս Կարոյեանի Հայաստան կատարած առաջին պաշտօնական այցելութեան, որ պատմական իրադարձութիւն մըն էր, որովհետեւ պաշտօնական ա՛յս այցելութեամբ, ան վերահաս-

տատեց արդեն իսկ գոյութիւն ունեցող Կիպրոս-Յայաստան սերտ յարաբերութիւնները: Յաւելեալ տեղեկութիւններու մասին անդրադարձած ենք «Լրատու»ի թիւ 12 էջին մէջ:

Իսկ Նոյեմբեր 22-26, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, ընդառաջելով Պենետիկտոս ԺՁ. Պապի պաշտօնական հրաւերին, այցելեց Վատիկան: Յատուկ հրաւեր ստանալով Վեհափառ Յայրապետէն, մաս կազմեցի Եպիսկոպոսաց դասուն եւ զանազան գաղութներէ աշխարհական ազգայիններէ բաղկացած շքախումբին: Այս այցելութեան ընթացքին, Արամ Ա. Յայրապետը ոչ միայն տեսակցութիւններ ունեցաւ Պենետիկտոս ԺՁ. Պապին եւ Վատիկանի բարձրաստիճան պատասխանատուներուն հետ, այլ նաեւ իմաստալից ելոյթներով ամրապնդեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ունեցած դերակատարութիւնը աշխարհի քրիստոնէական դաւանանքի ծիրէն ներս: Մանրամասնութիւնները կարդալ «Լրատու»ի 15 էջին մէջ:

Անսախընթաց եւ բացառիկ յաջողութեամբ իրականացաւ Յայաստանի հանրածանօթ «Քատանս» Անսամպլի ելոյթը, Ուրբաթ, 28 Նոյեմբեր 2008ին, Լաչչայի Քաղաքապետարանի սրահին մէջ, Կիպրահայ գաղութի երաժշտասեր անդամներու եւ Կիպրացի թէ օտար պաշտօնական հրաւիրեալներու ներկայութեամբ: Երեսփոխանական Գրասենեակի յատուկ հրաւերով, Կիպրոս հրաւիրուած այս եզակի հնգեակը, Արմէն Պապախանեանի գլխաւորութեամբ, արժանացաւ բուռն ծափահարութեան, Յայկական եւ Եւրոպական դասական ու արդի երաժշտական կտորներու կատարողութեամբ: Ելոյթին մասին անդրադարձած ենք «Լրատու»ի 17 էջին մէջ:

Դեկտեմբեր 7ին, Պաֆոսի մէջ տեղի ունեցաւ հայրենակիցներու համախմբում մը, նախաձեռնութեամբ եւ

գործակցութեամբ Ազգային Իշխանութեան եւ Պետական Ներկայացուցիչին: Այս հանդիպումը զուգահեյտեցաւ 7 Դեկտեմբեր 1988ի Հայաստանի երկրաշարժի զոհերու 20րդ տարելիցին եւ այս առիթով Ս. Գեորգ Յոյն Օրթոտոքս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ եւ հոգեհանգիստ, ապա՝ հիւրասիրութիւն եւ հանդիպում St. George հիւրանոցին մէջ: Ներկաները փափաք յայտնեցին յաճախակի ունենալ կրօնական արարողութիւններ, հայկական միօրեայ վարժարան, ինչպէս նաեւ ընկերային հաւաքներ: Տեղւոյն վրայ կազմուեցաւ յանձնախումբ մը, որ յառաջիկայ մի քանի ամիսներուն, Ազգային Իշխանութեան եւ Պետական Ներկայացուցիչին հետ գործակցաբար, պիտի կազմակերպէ Պաֆոսի Հայ գաղութը:

Վերոյիշեալ բոլոր աշխատանքները կը կատարուին միշտ ի մտի ունենալով Կիպրահայ Համայնքի ազգային, կրթական, մշակութային, կրօնական եւ ընկերային առողջ դիմագիծի պահպանումը: Ձեր մասնակցութիւնը եւ ներկայութիւնը տարուած աշխատանքներուն գծով, ուժ պիտի տան մեզի շարունակելու համար մեր լայն գործունեութիւնը, որ ի սպաս դրած ենք ապահովելու մեր փոքր գաղութին գոյատեւումն ու բարօրութիւնը:

Սիրելիներ,

Խօսքիս աւարտին, ընդունեցէք սրտագին բարեմաղթութիւններս Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդին առիթով, յուսալով որ 2009 թուականը բոլորիդ համար ըլլայ նախ առողջութեան եւ ապա՝ փափաքներու իրականացման տարի մը:

**Վարդէս Մահտեսեան**

**Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### **Քաղաքացիական հարցեր եւ կեցուրթին**

Գրասենեակի առօրեայ աշխատանքներուն մեծ մասը կը կազմեն մեր հայրենակիցներուն օրինաւոր արտօժանագիր ստանալու դիմումները ու անոնց հետապնդումը, ինչպէս նաեւ Հպատակութեան Դիմում կատարողներուն հարցերը: Վերջին երեք ամիսներու ընթացքին, կեցուրթեան եւ աշխատանքի բազմաթիւ արտօժանագիրներ ապահովուեցան, իսկ մի քանի բարդ պարագաներ յանձնուեցան Ներքին Գործոց Նախարարութեան, վերատեսութեան ենթարկուելու համար: Ինչպէս գիտեք, ժամանակին Կիպրոս մուտք գործած են շատ մեծ թիւով օտարահպատակներ եւ կառավարութիւնը յաճախ խիստ քայլերու կը դիմէ չնորոգելու համար չորրորդ տարին ամբողջացնողներու աշխատանքային արտօժանագիրները, պահանջելով յաւելեալ հրամաններ եւ հաստատագիրներ: Նոյնն է պարագան Կիպրոս որպէս այցելու մուտք գործողներուն, որոնց կեցուրթեան արտօժանագրի ժամկետը, 6 ամիս ետք, շատ մեծ դժուարութեամբ կը նորոգուի: Այս անհատները պետք է ներկայացնեն դրամատան երաշխաւորագիր (Bank guarantee), դրամատան հաշիւ (Bank Account), բժշկական/առողջապահական ապահովագրութիւն (Medical/Health Insurance) եւ սիւթապէս ինքնաբաւ ապրելու ապացոյց կամ Կիպրահպատակ անմիջական ընտանեկան մօտ պարագայի մը երաշխաւորութիւնը:

### **Հպատակութիւն**

Ինչպէս ձեզի տեղեակ պահած էինք «Լրատու»ի նախկին թիւով, հպատակութեան դիմումներուն գծով

շատ լուրջ եւ հետեւողական աշխատանք տարուեցաւ Պետական Ներկայացուցիչին կողմէ վերջին երեք ամիսներուն ընթացքին եւ որպէս արդիւնք, չորս անհատներ ստացան հպատակութիւն: Մի քանի անհատներու դիմումներն ալ շատ մօտ ապագային դրական արդիւնքի պիտի յանգին:

### **Պարզեւատրում**

15 Յոկտեմբեր 2008ին, Պրն. Վարդէ Մահտեսեան հրաւեր ստանալով Տարեց (հին) Սկաուտներու Նիկոսիոյ Կազմակերպութենէն, ներկայ գտնուեցաւ կազմակերպութեան 25ամեակի հանդիսութեան, որու ընթացքին պարզեւատրուեցաւ Հայագգի եւ երկար տարիներու վաստակ ունեցող տարեց Սկաուտապետ Եդբ. Յարութիւն Անմահունին: Պետական Ներկայացուցիչը սըրտանց շնորհաւորեց Եդբ. Անմահունին, այս կազմակերպութենէն ներս իր բազմամեայ գործունեութեան համար:

### **Սթրագպուրկի Խորհրդաժողով**

Սթրագպուրկի մէջ, Յոկտեմբեր 9ին եւ 10ին, տեղի ունեցաւ Եւրոպական Խորհուրդի Գլխաւոր Կառոյցի Ազգային Փոքրամասնութիւններու Պահպանութեան (Framework Convention for the Protection of National Minorities) խորհրդաժողովը: Այս խորհրդաժողովը կը զուգահդիպէր կառոյցի Ազգային Փոքրամասնութիւններու Պահպանութեան Յանձնաժողովի հիմնադրութեան 10ամեակին՝ նիւթ ունենալով «Արժեւորել Գլխաւոր Կառոյցի Գործունեութիւնը Պահպանելու Ազգային Փոքրամասնութիւնները, քննարկելով անցեալի փորձառութիւնը, ներկայի իրագործումները եւ ապագայի հեռանկարները»: Եւրոպական Խորհուրդի Ընդհանուր Զարտուղա-

րութեան ընտրանքով, Պրն. Մահտեսեան յատուկ հրաւեր ստացած էր մասնակցելու այս խոր-հրդածողովին, Հասարակական Կազմակերպ ու Թ ի ւ ն ն եր ու (NGOs) կողքին, որպէս միակ ներկայացուցիչը Կիպրոսի



*Մթրագայուրկի Խորհրդածողովին*

Կրօնական Փոքրամասնութիւններէն, որ իր ներկայացուցած տեղեկագիրներուն ընդմէջէն, տրամաբանական եւ հիմնական առաջարկներով ներդրում ունեցած էր կառոյցի ապագայի աշխատելածելը բարելաւելու գործընթացին մէջ:

Այս ժողովին նպատակներէն մէկն էր նաեւ վաւերացնել Եւրոպական Խորհուրդի Գլխաւոր Կառոյցի Ազգային Փոքրամասնութիւններու Պահպանութեան վերջնական յայտարարութիւնը (Final Declaration): Երբ կարդացուած է 19րդ եւ 20րդ դարերու պատմական իրողութիւններու պարբերութիւնը, ուր կը յիշատակուէին Երկու Համաշխարհային Պատերազմները, Հրեական Ողջակիզումը, Պաղ Պատերազմը ելլն., Պրն. Մահտեսեան խօսք առնելով շեշտած ու պնդած է Հայկական Ցեղասպանութեան իրողութեան ընդգրկումը վերոյիշեալ դէպքերուն կողքին, որ կարգ մը ժողովականներու կողմէ այլեւայլ առարկութեան դուռ բացած է: Գաղափարներու փոխանակումէն ետք, խորհրդածողովը ընդունած է Ցեղասպանութիւն բառը ներառել պատմական դէպքերու շարքին:

Տարբեր գլուխի տակ Պետական Ներկայացուցիչը

անդրադարձած Է Հայ Համայնքի անդամներուն դիմագրաւած շարք մը դժուարութիւններուն, մասնաւորաբար պետական պաշտօններու եւ այլ ասպարեզներու չտիրանալու անպատեհութիւնը, օրէնքներու եւ քննութիւններու ստեղծած արգելքներուն պատճառով:

Հոկտեմբեր 9ի երեկոյեան, Պրն. Մահտեսեան այցելած էր Երոպական Խորհուրդի Գլխաւոր Կառոյցի Ազգային Փոքրամասնութիւններու Պահպանութեան 10ամեակին նուիրուած ցուցահանդեսը, «Ազգային Փոքրամասնութիւններ, Այլազանութեան շունչը, Երոպայի շունչը» թեմայով, որու մաս կազմած էր Կիպրահայ գեղանկարիչ Թաթիանա Ֆերահեան:

Պրն. Մահտեսեանի արժեւորումով, իր մասնակցութիւնը, որպէս Կիպրահայ Համայնքի Ներկայացուցիչ, բաւական արդիւնաւետ էր եւ յոյսով է, որ ապագային դրական արդիւնքներ եւ փոփոխութիւններ կ'արձանագրուին Ազգային Փոքրամասնութիւններու իրաւունքներուն առնչութեամբ:

### **Տարեցներու հանդիպում**

Կիրակի, 2 Նոյեմբեր 2008ին, Ազգային Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Տարեցներու հանդիպումը, ներկայութեամբ աւելի քան 60 ներկաներու: Այս հաւաքը կազմակերպուած էր Տարեցներու Խորհրդարանի Կիպրահայ Երեսփոխաններու՝ Տիկիւններ Անահիտ Եսթիճեանի եւ Էլսի Իւթիւճեանի եւ Կիպրոսի Թոշակառուներու Միութեան ներկայացուցիչներուն համագործակցութեամբ:

Խօսք առաւ Կիպրոսի Թոշակառուներու Միութեան Ընդհանուր Քարտուղար Պրն. Զոստաս Աքարփարիս, որ մանրամասն բացատրութիւններով եւ միեւնոյն ժամանակ համապատասխան դիմումագիրներ ցոյց տա-





Ձախեն աջ.-

*Խրիստոս Ֆիլիպբու, Քոստաս Սքարփարիս,  
Մարքոս Ցիֆթես եւ Անահիտ Էսթիճեան*

լով, ներկայացուց թոշակառուներու իրաւունքները եւ նպաստները, ինչպէս նաեւ տարուած աշխատանքները, ապագային բարելաւելու երրորդ տարիքի անձերուն պայմանները: Պրն. Սքարփարիսին կ'ընկերանային Միութեան պատասխանատուներէն Պրն. Մարքոս Ցիֆթես եւ Պրն. Խրիստոս Ֆիլիպբու:

Ներկաները շատ օգտաշատ նկատեցին այս ձեռնարկը եւ գոհունակութիւն յայտնեցին կազմակերպողներուն, ինչպէս նաեւ Երեսփոխանական Գրասենեակին, որ մեր համայնքէն ներս առաջին անգամ ըլլալով սմանօրինակ միջոցառում մը նախաձեռնած էր: Տեղի ունեցաւ հարցումներու փոխանակում, որուն յաջորդեց պատշաճ հիւրասիրութիւն:

### ՀՀ Արդարադատության Նախարարի այց

Նոյեմբեր 3-5, պաշտոնական հրաւերով Արդարադատության Նախարար Պրն. Կիպրոս Խրիսոստոմիտիսի, Կիպրոս այցելեցին ՀՀ Արդարադատության Նախարար Պրն. Գեորգ Դանիելեանը եւ Փոխ-Նախարար Պրն. Էմիլ Պապայեանը: Պրն. Խրիսոստոմիտիսի հրաւերով կարգ մը պաշտոնական հանդիպումներու եւ ճաշերու ընթացքին, ներկայ գտնուեցաւ նաեւ Պրն. Մահտեսեան: Երկու երկիրներու Նախարարները ունեցան մտերմիկ հանդիպում մը, քննարկելու նախարարութեան հետ առնչուող հարցեր: Պրն. Գեորգ Դանիելեան տեսակցութիւն մը ունեցաւ Կիպրոսի խորհրդարանի Նախագահ Պրն. Մարիոս Կարոյեանին հետ եւ նոյն օրը, Հայաստանի պատուիրակութիւնը այցելեց Ազգային Առաջնորդարան եւ հանդիպում ունեցաւ Վարուժան Արք.ի եւ Թեմական ու Վարչական ժողովներու ատենապետներուն հետ:



Գեորգ Դանիելեանին հետ

Իսկ Նոյեմբեր 4ի երեկոյեան, Հայաստանի պատուիրակութիւնը ընթրիքի հիւրը եղաւ Տեր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններուն, ներկայութեամբ Կաթողիկո-

սական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոսի, Հայաստանի Հանրապետության Դեսպանին, Վարչական ժողովի Ատենապետին, Կիպրոսի Արդարադատության Նախարարության բարձրաստիճան անձնակազմի անդամներու եւ այլ հրավիրեալներու:

**Լիմասոլի Նարեկ Վարժարանի բացում**

Չորեքշաբթի, 5 Նոյեմբեր 2008ին, տեղի ունեցաւ Լիմասոլի Նարեկ Հայկական Վարժարանի նորակառոյց շէնքին բացումը, բարձր հովանաւորութեամբ եւ ձեռամբ Կիպրոսի Նախագահ Նորին Վսեմութիւն Տիմիթրիս Խրիստոֆիասի: Բացման արարողութեան ներկայ գըտնուեցան Խորհրդարանի Նախագահը, Կրթական եւ Մշակոյթի Նախարարը, ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի դեսպանը, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեանները, Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկո-



պոսը, Զահանայ հայրերը, դպրոցի տնօրէնութիւնը, հոգաբարձական եւ ուսուցչական կազմը, ինչպէս նաեւ Կիպրահայ համայնքի գաւակները:

Մեծ ուրախութիւն էր Կիպրահայութեան համար նորակառոյց շէնքին բացման արարողութիւնը, որու ընթացքին խօսք առին Նախագահ Խիստոֆիաս, Նարեկ Վարժարաններու Տնօրէնն ու Զոգաբարձութեան Ատենապետը եւ Զայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանը: Ան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Կիպրոսի բարեխնամ Կառավարութեան յարատեւ ցուցաբերած զօրակցութեան, ինչպէս նաեւ յիշեց ողբացեալ Պետրոս Գալայճեանի եւ Տոքթ. Վահագն Աղամեանի տարած աշխատանքները, Լիմասոլի դպրոցի շէնքին կառուցման գծով:

Յոս կը փափաքինք ձեր ազնիւ ուշադրութեան յանձնել թէ, Պրն. Մահտեսեանի փափաքով դպրոցի մուտքին գետեղուած արձանագրութեան վրայ յիշուեցաւ միայն «...Սոյն դպրոցի բացումը կատարուեցաւ Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի օրով»:

### **Կիպրոսի Խորհրդարանի Զայազգի Նախագահ**

#### **Մարիոս Կարոյեանի պաշտօնական այցը Զայաստան**

Նոյեմբեր 11-14 պետական պաշտօնական հրաւերով Զայաստան այցելեց Կիպրոսի Խորհրդարանի Զայազգի Նախագահ Մարիոս Կարոյեան, ընկերակցութեամբ Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի:

Պատմական այս այցելութեամբ, ամրապնդուեցան արդէն իսկ գոյութիւն ունեցող Կիպրոս-Զայաստան սերտ կապերը, որ տարիներէ ի վեր գոյութիւն ունին երկու բարեկամ երկիրներուն միջեւ:

Մարիոս Կարոյեան տեսակցութիւններ ունեցաւ ԶԶ Նախագահ Սերժ Սարգսեանի, ԶԶ վարչապետ Տիգրան Սարգսեանի, Խորհրդարանի Նախագահ Յովիկ Աբ-

րահամեանի եւ ՀՀ Արտաքին գործոց Նախարար Էտուարտ Նալպանտեանի հետ: Ան ելոյթ ունեցաւ նաեւ Հայաստանի Ազգային Ժողովի դահլիճէն ներս, հաստատելով Կիպրոսի Կառավարութեան զօրակցութիւնը հանդէպ Հայաստանի սորաստեղծ Հանրապետութեան:

12 Նոյեմբեր 2008ին, Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեան, ընկերակցութեամբ Պրն. Վարդգես Մահտեսեանի, այցելեց Ծիծեռնակաբերդ, ուր անոնք մեծ յուզմունքով յարգանքի տուրք մատուցեցին 1915ի Ցեղասպանութեան Յուշահամալիրին դիմաց ծաղիկ





գետեղելով, ապա Պրն. Կարոյեան յիշատակի ծառ մը տնկեց բակին մէջ:

13 Նոյեմբեր 2008ին, անոնք այցելեցին Ս. Էջմիածին եւ Վեհարանի դահլիճին կից գտնուող թանգարանը:



14 Նոյեմբերին, երկու հայորդիները Կիպրոս վերադարձան ոգեւորուած եւ բարձր տրամադրութեամբ, իսկ ապագայի իմաստով կը սպասուի Նշմարելի յառաջդիմութիւն Կիպրոս-Հայաստան յարաբերութիւններու շրջագիծէն ներս:

### Վատիկան այցելութիւն

Նոյեմբեր 22-26, Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, պաշտօնական հրաւեր ստանալով Պենետիկտոս ԺԶ. Պապէն, այցելեց Վատիկան: Վեհափառ Հայրապետը Եպիսկոպոսաց դասուն կողքին, Կիլիկիոյ Թեմի գաղութներէն հրաւիրած էր զանազան աշխարհական ազգայիններ, որոնց շարքին մաս կը կազմէին Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ:

Այս պատմական այցելութեան նպատակն էր ամուր հիմքերու վրայ դնել այն սերտ կապը, որ երկար տարիներէ ի վեր գոյութիւն ունէր Կիլիկիոյ Կաթողիկոսու-





թեան եւ Վատիկանի միջեւ: Պրն. Մահտեսեան հպարտութեամբ ականատես եղաւ այն յարգանքին, զորս Արամ Ա. Կաթողիկոս կը վայելէր այս շրջանակէն ներս: Իր երկու ելոյթներով, Վեհափառ Հայրապետը սահուն, բովանդակալից եւ իմաստալից խօսքերով, հմայեց կղերականներն ու աշխարհականները: Այս այցելութեան առիթով, Արամ Ա. Կաթողիկոս իր շքախումբով այցելեց Վատիկան Բաղաքի Հայաստանի Հանրապետութեան Դեսպանութիւն՝ Դեսպան Տիգրան Սամուէլեանի յատուկ հրաւերով:

Կիպրոս վերադարձին, Պրն. Մահտեսեան շնորհաւորական եւ շնորհակալական գիր մը ուղղեց Արամ Ա. Վեհափառին, յայտնելով իր ջերմ երախտագիտութիւնը:



**«ՔԱՏԱՆՍ» անսամպլի աննախընթաց ելոյթ**



Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգես Մահտեսեանի մասնաւոր հրաւերով եւ Երեսփոխանական Գրասենեակի Մշակութային Յանձնախումբի կազմակերպութեամբ, Կիպրահայութիւնը առիթը ունեցաւ Ուրբաթ, 28 Նոյեմբեր 2008ին, Լաչչայի Քաղաքապետարանի սրահին մէջ անմոռանալի պահեր անցընելու եւ վայելելու Զայաստանի հռչակաւոր «Քատանս» Անսամպլի ելոյթը: Սրահը լեցուած էր Կիպրահայ, Կիպրայոյն եւ օտար երաժշտասերներու, ինչպէս նաեւ պաշտօնական հիւրերու ներկայութեամբ:

Յայտագիրի առաջին բաժինի Զայկական կտորներու մեկնաբանութեամբ, արդէն իսկ ի յայտ եկաւ իւրաքանչիւր արուեստագետի բարձր կարողութիւնը: Ներկաները, սրտի անհուն գոհունակութեամբ եւ միեւնոյն ժամանակ մեծ յուզմունքով ունկնդրեցին Կոմիտաս Վարդապետի «Կռունկ»ն ու Սայաթ-Նովայի «Քանի Վուր Չան Իմ», իսկ Արամ Խաչատուրեանի գործերու կատարում-

ներով, «Քատանս»ը իր գագաթնակետին հասցուց սրահին մթնոլորտը, մանաւանդ երբ զուտ Հայկական գագաւմներով եւ հաստատակամ կշռոյթով նուագեց միջազգայնօրէն հանրաճանօթ «Սուրերու Պար»ը: Ներկաներուն սրտաբուխ ծափահարութիւններով թնդաց սրահը:

Կարճ դադարէ մը ետք սկսաւ յայտագիրի երկրորդ բաժինը, որու ընթացքին մեր Հայրենի արուեստագետները նոյն ճարտարութեամբ շարունակեցին նուագել օտար երաժիշտներու յորինումները, մանաւանդ Փիագոլլայի «Թանկօ»ներու կատարողութեամբ, անոնք անգամ մը եւս եկան փաստելու, իրենց արհեստավարժ բարձր կարողութիւնները: Ելոյթի վերջաւորութեան, ընդառաջելով ներկաներուն փափաքին, «Քատանս»ը դարձեալ նուագեց «Սուրերու Պար»ը:



Ելոյթէն ետք, Տէր Եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու բնակարանին մէջ, ներկայութեամբ Մշակութային Յանձնախումբի անդամներուն, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն՝ ի պատիւ «Քատանս» Անսամպլի:

Մինչեւ օրս, տակաւին մեր գրասենեակը բազմաթիւ հեռաձայններ եւ շնորհաւորութիւններ կը ստանայ, հրաւիրած եւ կազմակերպած ըլլալու համար բարձր որակի այսպիսի համոյթ մը, որ մեծ տպաւորութիւն ձգած էր ներկայ կամ կամքէ անկախ պատճառներով բացակայողներու վրայ:

Յիշենք, թէ «Քատանս» Անսամպլը Կիպրոս իր կեցութեան ընթացքին, այցելեց Նիկոսիոյ Նարեկ Վարժարանը, Ազգային Առաջնորդարան ու Ս. Աստուածածին Եկեղեցին, Մելգոնեան Կրթական Հաստատութիւն ու Կիպրոսի գանազան տեսարժան վայրերը: Խումբի պատասխանատու վարիչ Պրն. Նիքա Պապայեան եւ անուանի դաշնակահար եւ երաժիշտ Պրն. Արմէն Պապախանեան հարցազրոյց մը ունեցան Կիպրոսի Ռատիօկայանի Հայկական Ժամէն, որ ձայնասփռուեցաւ 13 Դեկտեմբեր 2008ի յայտագիրէն:



«Քատանս» Անսամպլը, Հայաստան վերադարձին, երախտագիտութեան ջերմ զգացումներով իր շնորհակալութիւնները փոխանցեց Պրն. Սահտեսեանի Գրասենեակին եւ Մշակութային Յանձնախումբին:

### Համախմբում Պաֆոսի մէջ



Կիրակի, 7 Դեկտեմբեր 2008ին, Պաֆոսի մէջ առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ հայորդիներու համախմբում մը, նախաձեռնութեամբ եւ գործակցութեամբ Ազգային Իշխանութեան եւ Պետական Ներկայացուցիչին, որ զուգահիւսեց իր 7 Դեկտեմբեր 1988ի Հայաստանի աղիտալի երկրաշարժի 20-րդ տարելիցին, Ս. Գեորգ Յոյն Օրթոտոքս եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Ս. Պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն, Պաֆոսի Մետրոպոլիտ Եորկիոս Եպիսկոպոսի բարեացակամութեամբ:



Եկեղեցական արարողութենէն ետք, St. George հիւրանոցին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ խորհրդակցութիւն, մօտ 100 հայորդիներու ներկայութեամբ, որու ընթացքին խօսք առին Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, Թեմական եւ Վարչական ժողովներու ատենապետներ Սեպուհ Դաւիթեան եւ Անդրանիկ Աշճեան: Այս հանդիպումէն ի յայտ եկաւ, թէ Պաֆոս բնակութիւն հաստատած մեր հայրենակիցները, կը փափաքին ունենալ կրօնական յաճախակի արարողութիւններ, Զայկական միօրեայ վարժարան, ինչպէս նաեւ հայաշունչ ընկերային կեանք: Պրն. Մահտեսեանի խնդրանքով, տեղւոյն վրայ կազմուեցաւ յանձնախումբ մը, որ ներկայացուած առաջարկները սերտէ եւ յաջորդող ամիսներուն, գործակցելով Պետական Ներկայացուցիչին եւ Ազգային Իշխանութեան պատկան մարմիններուն հետ, ըստ յարմարութեան իրագործէ ու կազմակերպէ գաղութի հայկական կեանքը:

Հոս տեղին է յիշել, թե Պաֆոսի Հայ գաղութի կազմակերպման եւ համախմբումի առաջարկը բխած էր Երեսփոխանական Գրասենեակի Կիպրոս-Հայաստան Յանձնախումբի Ապրիլ-Մայիս 2008 թուականի ժողովներէն եւ այս առաջարկը փոխանցուած էր Ազգային Առաջնորդարանի Թեմական եւ Վարչական ժողովներուն, սկզբնական քայլեր առնելու համար:

Յոյսով ենք, Պետական Ներկայացուցիչի եւ Ազգային Իշխանութեան այս գործակցութիւնը, նոր էջ մը կը բանայ Կիպրահայ գաղութի կեանքէն ներս:

### **Շնորհաւորական գիրեր**

2 Հոկտեմբեր 2008 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը իր եւ Կիպրահայ Համայնքին անունով շնորհաւորեց «Անորդոսիս» Մարզական Ակումբը, Եւրոպական Ախոյանութեան ոտնագնդակի մրցումներուն իր արձանագրած յաջողութիւններուն համար, որուն շնորհիւ Կիպրոսի անունը բարձր պահուեցաւ:

22 Հոկտեմբեր 2008ին, Պրն. Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Alpha Bank Cyprus Ltd.ի Աղլանճայի մասնաճիւղի բացումին, իսկ յաջորդ օրը, շնորհաւորական գիր մը յղելով, Պրն. Ղրիղորիոս Տիմալալէքսիսին յաջողութիւն մաղթեց, միեւնոյն ժամանակ իր գոհունակութիւնը յայտնեց մասնաճիւղի տնօրէնի պաշտօնին Կիպրահայ Պրն. Վիգէն Բարիքեանի նշանակումին համար:

10 Նոյեմբեր 2008 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց Թաթիանա Ֆերահեանը, Պէյճիկի Olympic Fine Arts 2008 ցուցահանդէսին իր մասնակցութեան համար ստացած ոսկի մետալին առիթով:

10 Նոյեմբեր 2008ին, Պրն. Մահտեսեան շնորհաւորեց Վերա Դաւիթեանը, ՀՕՄ-ի 69-րդ Պատգամաւորական

Ժողովին Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Կարչութեան անդամ ընտրուելուն առիթով:

9 Դեկտեմբեր 2008 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց Հայաստանի Հանրապետութեան Նախագահ եւ Ճատրակի Ֆետերասիոնի Նախագահ Ն.Վ. Սերժ Սարգսեանը, Հայաստանի Ճատրակի տղոց հաւաքականին 38-րդ Միջազգային Ողիմպիականի տիտղոսին տիրանալուն առիթով, մաղթելով որ ապագային կը շարունակեն արձանագրել նորանոր յաջողութիւններ, պատիւ բերելով մեր Հայրենիքին ու համայն Հայութեան:

### **Այցելութիւններ եւ ներկայութիւն**

Ուրբաթ, 19 Դեկտեմբեր 2008ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Տէր Մոմիկ Քիւյ. Հապէշեանի, Նոր Տարուան եւ Ս. Ծնունդին առիթով այցելեց բանտարան, ուր անոնք մօտէն տեսակցութիւն ունեցան Հայ բանտարկեալներուն հետ:

Հինգշաբթի, 25 Դեկտեմբեր 2008ին, Պրն. Մահտեսեան եւ տիկինը այցելեցին Լառնաքա, ուր անոնք ներկայ գտնուեցան Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ անուանակոչութեան արարողութեան:

Հինգշաբթի, 25 Դեկտեմբեր 2008ին, Տէր եւ Տիկին Մահտեսեաններ, յատուկ հրաւերով, ներկայ գտնուեցան Հ.Ե.Մ.ի տարեկան պարահանդեսին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Հիլթըն» պանդոկին մէջ:

Վարդգես Եւ Մակի  
Մահտեսեաններ  
կը շնորհաւորեն  
Կիպրահայու թիւնը  
Եւ մեր հայրենակիցները  
Ամանորի Եւ Ս. Ծնունդի  
տօներուն առիթով,  
մաղթելով առողջութիւն  
Եւ արեւշատութիւն,  
իսկ մեր Մայր Հայրենիքին  
կը մաղթեն բարգաւաճում Եւ  
հիմնախնդիրներու  
բարւոյք լուծում:

## ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

### Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
Հեռախօս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42  
Ել. Հասցէ office@armenianmp.com  
Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

### Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
Հեռախօս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42  
Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy